39. ԲԱԴԱՐԱՔՅԸ

Մրհետե մին մարթ հեն ա ըլալ մին տեղավ քյիս։ Տրեսալ ա հեն ըն ըտեղ մին տեղ բադարաքյ ընես։ Համին էտ բադարաքյ անողը մին հարուստ մարթ ա ինիս, ըտրա հարը մեռած ա ինիս։

Էտ մարթտ վեր մտունաս ա, համին էտ բադարաքյին տարը ըտրան ասես ա. — Տու վէլ բադարաքյին մասնակցե։

Էտ մարթտ էլ քյիս ա բադարաքյին մասնակցե։ Վեր բաղարաքյը պրծնես ա, լոխ հվքվես ըն, թա քյնին տոն, էտ մարթտ էլ ա եր կնաս, թա հղե ինի։

Բադարաքյին տարը ծեն ա տաս ըտրան, տանես կոխկը։

Մին խիլլի վախտ ըտրա նհետ հրրցրփորց ա ընես, վերչը վեր պրծնես ա, պրզվես ա, վեր ղոնաղը շենին խլնք-խելունք մարթկանցան մինն ա։

Բդրաքյեն տարը ասես ա. — Լավ, վեր խելունք ըս, ասե տեսնամ. իմ. հար տրախտրն ա քյեցալ, թա տժոխկը։

Էտ մարթտ ասես ա. — Ըղետ ընդի պեն ա, վեր Ղարաբաղու ճիրան խմիմ. վեչ, կարիլ չըմ. ասիմ։

Բդրըքյատարը քյիս ա. կուպրունը պտռես, տսնաս մաչին արաղը պրծած։

Մին պուշ մարթ ա ըղրկիս, քյինի տանան արաղ պիրի։ Մին խիլլի վախտ անց ըրաղու քյեցած մարթը կյաս ա շենը, մին սհաթումը արաղը յոր ունես, քյիս։

Բդրաքյին տարը ըրաղին բոթուլը յոր ա ունես, մին ստաքան

ըծես, տաս համին էտ խելունք մարթիտ, ըսես. — Խմե, ամմա բեդի դուղն ասիս, թա իմ հաՀր տըրախտը քյեցա՞վ, թա տըժոխկը։

Էտ մարթը խմես ա, մին խիլլի շուլի-մուլի ընես, հալա խուսես չի։ Խելունքը ժուլիգյ մարթ ա ինիս, էտ ուրուր ա ընես ջողաբը, ըսէս. — Հղե յա իլալ, դիբի տըրախտը քյինի՞։

Բդրաքյեն մեծը ըսես ա. — Ջհաննամը-գյոռը, մին էլ ըմ ուրաղ տըլական, թաքյ լհա դուղն ասի, թա ըշտեղ քյեցա՞վ։

Մին ստաքան էլ ըծես ա, տաս, էտ մարթտ խմես ա, պրծնես, մին խիլլա մըտրծես բըդրրքյատուրուչը ջողաբը տաս. — Նի յա հսալ, հալա գյիդաս չըմ, վեր հըղրցավ ա քյըեցալ, բդի տժոխկը տանող հըղրցավը, թա՞ բդի տրախտը տանող հըղրցավը։

Բդրաքյատարը մին ստաքան էլ ա ըծես, տաս, հանցվեր գյիդա, թա հաՀրը շտեղ քյեցավ։

Խելունքը խմես ա, պրծնես, ըսես. — Եկալ ա, հեն ա մին փադ եր կալած մեհետ տժոխկեն տըռանըն ա թխես, մեհետ տրախտեն։

Բդրաքյատարը մին ստաքան էլ ա ըծես, տաս, համ էլ հըրցնես. — Բա հի՞նչ տեռավ, իտի շտեղ քյեցավ։

Խելունքը ետ ա տըռնաս, ըսես. — Դե հալա տըռները պեցալ չըն, ամմա ինքյը պատեն յրա վեննը կացած ա, գյիդում չի, թա վե՞ր թրափավ լոք տա։

Բդրքյատարը ըսես ա. — Վնաս չունէ, մին ստաքան էլ կտամ, թաքյ լհա դուղն ասես, թա շտեղ քյեցավ։

Հը՛, հի՞նչ տեռավ, տըժոխկըն ընգավ, թա տրախտը։

Վերչը մին ստաքան էլ ա տաս։ Խելունքը խմես ա, ետնան ըսես. — Լոք տվավ, թրմփոցը ըսկացե, ամմա թա գյիդում չըմ տժոխկը ընգա՞վ, թա տրախտը։

Խելուքը մին ստաքան արաղ էլ ա խմես, ըսես. — Տրախտը ընգավ։

Էտ մարթտ պիրիս ա նորու բաղարաքյ սրքես, ժողովուրթ կընչես, ըսես.— Իմ հաՀր տրախտն ա ընգալ, ա՛ ժողովուրթ, քյեփ ըրեքյ։ Էտ մարթիտ մին լավ պադեվ ա տաս։

Էտ մարթտ եր ա կնաս, քյինիս ուրանց տոն, կնգանը քաթ ընես, վեր իտի քյալագյ ա եկալ։

Մին խիլլա վախտ ընցնես ա, մարթըկնեգյ լավ ըպրես ըն։

Մին օր կնեգյը հեն ա ինիս տանը, տրեսնաս ա մին մարթ եկու։

Տուս ա կյաս տոռնը, յիշիս, էտ անծանոթ մարթտ ըսես ա. — Ա՛ կնեգյ, մարթտ տանն ա՞։

— Տանը չի, ախպեր։

— Դե, քյինի ասե կյա տոն, նհետը կործ օնիմ, հարկավեր ա։

Կնեգյը մին խըխու ղրկես ա մարթին հետան։ Մարթը վեր հըսկնաս ա պլուՀիկնեն ուրուր ա տաս, գյիդաս ա, վեր էտ նաղլետ քամակը լավ չի իննական։ Վերչը կյաս ա, տսնաս համին էտ բդրըքյատարը։

Էտ մարթտ ըսես ա. — Ըրազումս տեսալ ըմ հարս եկած, շատ ռեքյեփ, նհետս մին խիլլի վախտ խոսալ չի։ Ախրը մին խիլլի վախտ խռավ կնալանը ետը, օշը տեսն ա ըրալ, լաց ընելավ ասալ, վեր ընդալ ա տժոխկը, ըտեղ էլ ուրան գինշոթըն չըն տաս, գյիդաս չի, թա հո՞ւնց անե, վեր ընգնե տրախտը։

Էտ խելուքը ըսես ա.— Ըստեղ արաղ բդի տուրուր կյա, վեր կարիմ մին պեն ասիմ։

Էտ մարթտ ճարը կտրած եր ա կնաս, քյիս, մին կոլա արաղ յոր ունես, կյաս։ Մին ստաքան ըծես, տաս խելուքին։

Խելուքը ըսես ա. — Վեր խմեցե, քու հար տեսե. շատ տխուր ար, ըսեցե եք ծեռքատ փռնիմ, տանիմ տրախտը, օղից վեչ, լաց իլավ։ Ըտրանա ետը խոսից վեչ։

Ընդրանա ետը էտ խելուքտ մին ստաքան էլ ա խմես, ըսես. — Քու հար տրախտան մուտացավ, ամմա վրեննը տափը թակից, թա յըես քյինամ ըմ քյոհնա տըեղս։

Մին ստաքան էլ խմելանը ետը, խելունքն ասից. — Վերչը լավ կինի, վերչը տրախտը կընգընի՞։

Էտ քյուհի մարթը հվըտաս ա։ Մհենգյ լոխչին հաճողվես չի, իտի պեներ անին։ Ժողովուրթը ըսես ա. «Սերը սվերը կօտե»։